# Ամփոփաթերթ

| Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 2 հողամաս հասցեում «Ծովինար 1» արևային ֆոտովոլտային Էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների պատասխան | | | | |
|---|---|---|---|---|
| **ՀՀ** | **Ներկայացված դիտողությունները** | **Դիտողության պատասխանը** | **Հիմնավորում** | **Կարծիք** |
| 1. | 8.2.9 «Բնության հուշարձաններ կետում» Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանների քանակ «15» թիվը խմբագրել «16»-ով: Խմբագրել նաև «Թառ (Կարմիր Կատար)» հրաբխի տեղադիրքի տվյալները (Գեղարքունիքի մարզ, Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ հրաբխից հարավ-արևմուտք, Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով): ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանների ցանկում գոյություն չունի «Օֆիոլիտային ապարների» մերկացումներ անվամբ բնության հուշարձան, | Ուղղվել է համապատասխան կետում: | | |
| 2. | «10.5 Թափոններ» ենթաբաժնում առաջարկում եմ ավելացնել տեղեկություններ նշված գոյացող թափոնների վտանգավոր հատկությունների և դրանց կազմի վերաբերյալ, | Պարզաբանումը տրված է նույն կետում: Տարօրինակ և անընդունելի հարցադրում է, քանի որ թափոնների | Նույն կետում նշված է, որ «Վտանգավոր թափոնները լիցենզավորման ենթակա գործունեութուն են | Նշված պահանջը ձևակերպելուց միգուցե առաջարկեք այն օրենսդրական հիմքը, որտեղ հնարավոր է գտնել, լաթերի, կենցաղային աղբի կազմը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | վտանգավոր հատկությունների բնութագիրն արդեն տրված է իրենց վտանգավորության դասով: Դրանց պարունակությունը ստուգվել և ամրագրվել է վտանգավորության դասով: Ինչ վերաբերվում է տրանսֆորմատորրային յուղերին նշված է, որ չպետք է պարունակեն Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ: | համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի վերջիններիս գործածությունը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպություններ կողմից»: Դրանց կազմի, վտանգավոր հատկությունների գնահատումը պետք է կատարվի թափոնների անձնագրերում: | Իսկ սև մետաղների, պղնձի, ալյումինի կազմը ակնառու է, ըստ իրենց մետաղի պարունակության: |
| 3. | Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը» բաժնի՝ «5. Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.19994թ. և խմբագրված 07.12.2022թ.)» բառերը խմբագրել հետևյալ կերպ՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ.), | Հաշվետվության իրավական բաժնում մթնոլորտային օդի պահպանության մասին Օրենքի ձևակերպումը ճիշտ է գրված: | | |
| 4. | «11.Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նվազեցման, չեզոքացման և փոխհատուցման բնապահպանական միջոցառումների ծրագիր» բաժնում ներառված միջոցառումները | Դիտողությունը չի ընդունվում, քանի որ այն համապատասխանում | Միջոցառումները պետք է բխեն գործունեության բնույթից, այլ ոչ թե | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխանեցնել մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին, | է մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին: Հանվել է միայն հղկման աշխատանքերի միջոցառումը, քանի որ գործունեության ընթացքում հղկման աշխատանքներ չեն նախատեսվում: | Օրենքի դրույթների պահանջները մեխանիկորեն ներառել հաշվետվության մեջ: | |
| 5. | ներկայացնել տեղեկատվություն թե՛ ինչ եղանակով և տեխնիկայով է կատարվելու ջրցան, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի և շինարարական հրապարակի անկազմակերպ փոշու արտանետումների քանակական և որակական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը: | Պարզաբանվել է 9.1.3 կետում: Շինարարական հրապարակի անկազմակերպ փոշու և շահագործվող տեխնիկայի արտանետումների քանակը և որակական արդյունքներն առկա են հաշվետվոթյան հավելված 8-ում, ինչպես նաև 10.1 կետում: | Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող համապատասխան տարողության բաքի մեջ, որից էլ ցնցուղային եղանակով կատարվելու է ջրցան: Ջրցանի համար կօգտագործվի նաև փոշեճնշիչ սարքավորում: | |
| 6. | նախագծում ներառել նաև փոշենստեցման այդ թվում փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը համաձայն՝ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և | Ավելացվել է ՇՄԱԳ-ի 11.1 կետում: | Նշված հրամանը վերաբերում է <<Շինարարության կազմակերպման նախագծի>> կազմմանը, որը պետք է ներառի | Համաձայն հրամանի 4-րդ կետի «Փոշենստեցման և փոշեճնշիչ միջոցառումների մասով հավելվածով սահմանված պահանջները կգործեն նշված հրամանն ուժի մեջ մտնելուց հետո չորրորդ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի | | փոշենստեցման միջոցառումներ, որոնք նախատեսվել են ՇՄԱԳ-ի 11.1 կետում: | ամսից»: **Պաշտոնական հրապարակման օրը՝ 23 հունվարի 2026 թվական:** |
| 7. | նշվում է, որ «տեխնիկական նպատակով օգտագործվող ջուրը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով, տեխնիկական ջրի պայմանագիրը հնարավոր կլինի կնքել միայն ընկերության կողմից համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո», սակայն շինարարության թույլտվությունը տրամադրվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության դեպքում, ուստի անհրաժեշտ է ջրի բերման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել մինչև շինարարության թույլտվության իրավունքի ստացումը: | Ընդունվում է գիտություն: | Ընկերությունը պատրաստակամ է և նախատեսում է դրական եզրակացությունը ստանալուց հետո, մինչև շինարարության թույլտվության իրավունքի ստացումը, ներկայացնել ջրի բերման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է ներկայացնել ընթացակարգը, փորձաքննական գործընթացի ավարտից հետո: | Նշված տեղեկատվությունը ստուգելու համար պետք է դիմել բնապահպանության տեսչական մարմնին, որը իրավասու է ճշտել և տրամադրել համապատասխան տեղեկատվություն: |
| 8. | «10.5 Թափոններ.» բաժնում ներկայացված հողային զանգվածի ծավալը հստակեցման կարիք ունի, քանի որ «10.2 Հողային ռեսուրսներ.» (էջ58) բաժնում նշված աղբավայր տեղափոխվող հողային զանգվածների ծավալներն չեն | Դիտողությունը չի ընդունվում , քանի որ 10.5 և 10.2 հեռացվող հողային գրունտի ծավալը նույն է՝ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխանում, | 589.7մ$^3$: | | |
| 9. | գնահատման հաշվետվության վերնագրում և գնահատման հաշվետվությամբ ներկայացված նախատեսվող գործունեության հասցեն համապատասխանեցնել ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի և անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի:<br><br>ՀՀՔԿՆ<br><br>ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի Աղլի քռա 2 հողամաս հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հայտնում եմ, որ փաթեթում առկա են անհամապատասխանություններ.մասնավորապես՝ քննարկվող հողամասի հասցեների վերաբերյալ: Ինչպես նաև ներկայացված սխեմաներում նշված են երկու հողամասեր, իսկ հայտը վերաբերվում է միայն մեկ հողամասին: | Ուղղվել է ՇՄԱԳ-ում:<br><br>Սխեմաներում երևում է երկու հողամաս, քանի որ նշված է մոտակա հողամասը, որտեղ ևս այլ սեփականատիրոջ կողմից նախատեսվում է արևակայանի իրականացում: Երկուսն էլ գտնվում են փորձաքննության փուլում: | Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը վերաբերվում է միայն «Վիվասոլար» ընկերության թիվ 2 հողամասին: | Վրիպակը պայմանավորված է անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի փոփոխությամբ: |
| 10 | Կադաստր<br>Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,<br>Ի պատասխան Ձեր 2026 թվականի հունվարի 8-ի N 1/26.19/69-2026 գրության՝ «ՎԻՎԱՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար | Կադաստրի կոմիտեից ստացվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հավելված 5: | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բնակավայրի Աղլի քռա 2 հողամաս հասցեում «Ծովինար 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հայտնում ենք, որ քննարկվող անշարժ գույքի մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար ընկերությունը սահմանված կարգով կարող է դիմել Կադաստրի կոմիտեի e-cadastre.am կայքի միջոցով՝ ներկայացնելով անշարժ գույքի նույնականացման տվյալներ (հողամասի շրջադարձային կետերի՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով կազմված կոորդինատները և/կամ կադաստրային ծածկագիրը և/կամ իրավունքի պետական գրանցման վկայականը) և տեղեկատվության տրամադրման վճարի մուծման անդորրագիրը: | | | |
| 11. | ԿԳՄՍ<br><br>Հայտնում ենք, որ «Վիվասոլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի Աղլի քռա 2 հողամաս հասցեում «Ծովինար 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության | ՇՄԱԳ հաշվետվությունում հաշվի է առնված ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | վերաբերյալ նախարարության կարծիքը դրական է: Միաժամանակ հայտնում ենք, որ հաշվի առնելով 11,79786 հա տարածքում հնագիտական ուսումնասիրության եզրակացության մեջ ներկայացված ռիսկերը, անհրաժեշտ է հնագետի հետ համատեղ կազմել և լիազորված մարմնի համաձայնեցմանը ներկայացնել կառավարման պլանով նախատեսված աշխատանքների նախագիծը: | աշխատակիցների կողմից կատարված ուսումնաիրության արդյունքում առաջարկված բոլոր պահանջները, որը ներկայացված 11.6 կետում: Միաժամանակ նախագծում և ՇՄԱԳ-ում ներկայացվել են սխեմատիկ քարտեզներ, որոնցում, հնագետի համաձայնությամբ, հստակ տարանջատվել են հնագիտական հուշարձանները: | | |